ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ԼՂԻՄ XX ԳՈՒՄԱՐՄԱՆ ՍՈՎԵՏԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Ապրիլի 26-ին տեղի ունեցավ ժողովրդական դեպուտատների Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի XX գումարման սովետի հինգերորդ նստաշրջանը: Այն բացեց ժողովրդական դեպուտատների ԼՂԻՄ սովետի գործկոմի նախագահի տեղակալ, դեպուտատ Շ. Մ. Պետրոսյանը:

Նստաշրջանը քննարկեց հետևյալ հարցերը.

1. Ժողովրդական դեպուտատների մարզային սովետի մանդատային հանձնաժողովի զեկուցումը 1988 թվականի հունվարի 24-ին ընտրված դեպուտատների լիազորությունները հաստատելու մասին:

2. Ժողովրդական դեպուտատների մարզային սովետի գործկոմի հաշվետվությունը 1987 թվականի աշխատանքի մասին:

3. ԼՂԻՄ ժողովրդական վերահսկողության կոմիտեի հաշվետվությունը:

Օրակարգի առաջին հարցի առթիվ զեկուցումով հանդես եկավ ժողովրդական դեպուտատների մարզային սովետի մանդատային հանձնաժողովի նախագահ, դեպուտատ Վ. Զ. Մայիլյանը:

Նստաշրջանը հաստատեց մարզային սովետի մանդատային հանձնաժողովի զեկուցումը և վավերացված հանձնեց № 24 ընտրական օկրուգում նոր ընտրված դեպուտատ Վլադիմիր Հայրապետի Թովմասյանի և № 81 ընտրական օկրուգում նոր ընտրված դեպուտատ Լուսիկ Ռոմայի Հակոբյանի լիազորությունները:

Օրակարգի երկրորդ հարցի առթիվ զեկուցումով հանդես եկավ ժողովրդական դեպուտատների ԼՂԻՄ սովետի գործկոմի նախագահի առաջին տեղակալ, դեպուտատ Ֆ. Ա. Հյուսեյնովը, երրորդ հարցի առթիվ՝ ԼՂԻՄ ժողովրդական վերահսկողության կոմիտեի նախագահ, դեպուտատ Վ. Հ. Թովմասյանը:

Զեկուցումների շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին Մարտակերտի շրջգործկոմի նախագահ, դեպուտատ Վ. Ս. Ջավադյանը, Ասկերանի շրջգործկոմի նախագահ, դեպուտատ Վ. Ե. Քոչարյանը, Մարտակերտի շրջանի Թևոսյանի անվան սովխոզի բանվորուհի, դեպուտատ Ա. Դ. Սուքիասյանը, գյուղատնտեսական մեքենաների գործարանի դիրեկտոր, դեպուտատ Ս. Հ. Բաբայանը, Շուշվա շրջգործկոմի նախագահ, դեպուտատ Ռ. Ի. Հաջիևը, Բաքվի 26 կոմիսարների անվան Ղարմետաֆսկոմբինատի ջուլհակուհի, դեպուտատ Ս. Ա. Գրիգորյանը, Մարտունու շրջգործկոմի նախագահ, դեպուտատ Ս. Ա. Սեյրանյանը, հանրապետության շինմինիստրության № 9 տրեստի կառավարիչ, դեպուտատ Ռ. Գ. Խարայելյանը, ժողովրդական հսկողության Մարտակերտի շրջանային կոմիտեի նախագահ Լ. Բ. Հովհաննիսյանը, ժողովրդական հսկողության Շուշվա շրջանային կոմիտեի նախագահ Ա. Ն. Բարիշևը, Ստեփանակերտի ԼՂԻՄ 60-ամյակի անվան էլեկտրատեխնիկական գործարանի ժողովրդական հսկողության խմբի նախագահ Ս. Գ. Մանուկյանը, Ստեփանակերտի № 4 շարժական մեքենայացված շարասյան բանվոր, դեպուտատ Պ. Մ. Սաղիյանը, Ստեփանակերտի Վ. Ի. Լենինի անվան տպարանի դիրեկտոր Յու. Բ. Ներսիսյանը:

Քննարկված հարցերի առթիվ նստաշրջանն ընդունեց համապատասխան որոշումներ:

Նստաշրջանը քննարկեց կազմակերպական հարց: Նստաշրջանը Վ. Վ. Օսիպովին ազատեց ժողովրդական դեպուտատների ԼՂԻՄ սովետի գործկոմի նախագահի և անդամի պարտականություններից՝ մարզի սահմաններից դուրս այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ:

Նստաշրջանը ժողովրդական դեպուտատների ԼՂԻՄ սովետի գործկոմի նախագահի պարտականությունները ժամանակավորապես դրեց գործկոմի նախագահի տեղակալ Շ. Մ. Պետրոսյանի վրա:

Նստաշրջանի աշխատանքին մասնակցեցին կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղար Հ. Ա. Պողոսյանը, կուսակցության մարզկոմի երկրորդ քարտուղար Բ. Ա. Մալկովը, կուսակցության մարզկոմի քարտուղար Վ. Ա. Աբաջանյանը: